# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Եղեգնաձորի համայնքապետարանը,որը գտնվում է Շահումյան 1հասցեում,ստորև ներկայացնում է իր կարիքների համար կազմակերպված **N** <<ՎՁՄ-ԵՀ-ԳՀԾՁԲ-23/ՎՋՏՀ>> ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 **թվականի մայիսի 4-ին** կնքված **N** <<ՎՁՄ-ԵՀ-ԳՀԾՁԲ-23/ՎՋՏՀ>> պայմանագրում 2023 թվականի **հունիսի 26 -ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| ***<u>Փոփոխության նկարագրություն</u>***՝ | Կողմերը հաստատել են նոր Օրացույցային գրաֆիկը համաձայն՝ Հավելված 1-ի, նոր Վճարման ժամանակացույցը համաձայն՝ Հավելված 2-ի: |
| ***<u>Փոփոխության հիմնավորում</u>***՝ | Սույն փոփոխությունը կատարվում է՝ հիմք ընդունելով պայմանագրի 7.5, 7.15 կետերը: |

***Պատվիրատու***՝ Պատվիրատու՝Եղեգնաձորիհամայնքապետարան

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ-01

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐՆԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ «ՎՁՄ-ԵՀ-ԳՀԾՁԲ-23/ՎՁՏՀ» ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

26 հունիսի 2023թ.

ք Եղեգնաձոր

Եղեգնաձորի համայնքապետարանը, ի դեմս համայնքապետ Դ.Հարությունյան, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և " Ստյոպշին " ՍՊԸ - ի դեմս տնօրեն Լ.Գևորգյան-ի, որը գործում է ՍՊԸ - ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, միասին այսուհետև `կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությանբ , հիմք ընդունելով կողմերի միջև կնքված 04.05. 2023թ թ. պետական գնման պայմանագիրը (այսուհետև `Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը`փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին

**1.Համաձայնագրի առարկան**

1.1 Հաստատել համաձայնագիր նոր օրացույցային գրաֆիկը համաձայն հավելված 1-ի:

1.2 Հաստատել համաձայնագիր նոր վճարման ժամանակացույցը հավելված 2-ի:

1.3 Սույն համաձայնագիրի գինը կազմում է 301.050(երեք հարյուր մեկ հազար հիսուն) ՀՀ դրամ:

**2.ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է` մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում ` պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագրում չնշված` Կողմերի պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3Սույն համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից , յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3.ԿՈՂՄԵՐԻՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸԵՎՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Հասցե՝ ք. Եղեգնաձոր Շահումյան-1<br>ՀՎՀՀ՝ 08917624<br>Հ/Հ՝ 900352101043<br>ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն<br>Համայնքապետ Դ.Հարությունյան<br>------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | ՍՏՈՊՇԻՆ ՍՊԸ<br>Հասցե Վայոց Ձոր գ.Արին5-րդ փ./տ2<br>ՀՎՀՀ08917598<br>Հ/Հ՝2475805267280000<br>Բանկ ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՁԲԸ<br>------------------------<br>/ստորագրություն/Կ.Տ. |

Հավելված 1
«ՎՁՄ-ԵՀ-ԳՀԾՁԲ-23/ՎՁՏՀ»ծածկագրով գնման պայմանագրի
« 26 » հունիսի 2023թ. կնքված
Թիվ 1 Համաձայնագրով

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| ...հրավերով ...ախատեսված ...չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը** | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | Ժամկետը*** |
| 1 | 71521100 | Եղեգնաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություննների մատուցում | դրամ | 301.050 | 1 | ք.Եղեգնաձոր Շահումյան 1 | Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 60 օրացույցային օր Համապատասխան շինարարական աշխատանքների կատարման ավարտը |
| ...անսավորման աղբյուր | | 2023թ. ՀՀ պետական բյուջե | | | | | |
| ...ավիրատու | | Եղեգնաձորի համայնքապետարան | | | | | |
| ...խատանքի տեսակը | | Ըստ ծավալաթերթ-նախահաշվի | | | | | |
| ...ռայության մատուցման ընդհանուր ...հանջներ | | • Իրականացնել ամենօրյա տեխնիկական հսկողություն՝ համաձայն քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանում բերված դրույթների՝ ապահովելով Ծառայությունը մատուցողի կողմից նշանակված տեխնիկական հսկիչի ամենօրյա ներկայությունը շինարարական օբյեկտում (ընդ որում տեխնիկական հսկիչը պետք է ընդգրկված լինի Ծառայությունը մատուցողին տրված լիցենզիայի պատասխանատու անձանց ներդիրում: Տվյալ շինարարական տեղամասում նշանակված տեխնիկական հսկիչի անհարգելի բացակայության դեպքում Ծառայություն մատուցողը պայմանագրով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն:<br>• Հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, համապատասխանությունն ապահովելու նպատակով՝ աշխատանքային նախագծին, կապալի պայմանագրի դրույթներին և գործող շինարարական նորմերին<br>• Հաստատել և հսկել աշխատանքների իրականացման ծրագիրը<br>• Ստուգել և հսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը: Արգելել կամ փոփոխել այն նյութերը, որոնք չեն համապատասխանում անհրաժեշտ պահանջներին<br>• Գնահատել և հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի շինարարական աշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի<br>• Ստուգել բոլոր այն լաբորատոր փորձարկումների արդյունքները, որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար<br>• Ստուգել բոլոր փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար<br>• Կատարել որակի և կատարված ծավալի ամենօրյա հսկում: Հաստատել վճարման հավաստագրերը, եթե աշխատանքները կատարվել են անհրաժեշտ որակով և ծավալով | | | | | |

| | |
|---|---|
| | • Կապալառուին պարզաբանել նախագծային փաստաթղթերի հետ կապված հարցերը: Անհրաժեշտության դեպքում առաջարկել աշխատանքային ժամանակացույցի մեջ կատարել փոփոխություններ կամ առաջարկել կատարել լրացուցիչ վճարումներ (երկու դեպքում էլ անհրաժեշտ է Պատվիրատուի համաձայնությունը) |
| | • Իրականացնել հսկողություն աշխատանքային տեղամասերում շինարարական աշխատանքների անվտանգությունը ապահովելու նպատակով: Հրահանգել կապալառուին ապահովել աշխատանքային տեղամասերում անհրաժեշտ նշանների, լուսավորության, անվտանգության այլ միջոցների առկայությունը<br>• Կատարել անհրաժեշտ օրական գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի տեխնիկական հսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների օրական հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր)<br>• Ստուգել և հաստատել կապալառուի կողմից նախապատրաստված կատարողական գծագրերը: |
| ...շվետվության ներկայացման ...ահանջներ | • Կատարողը պարտավոր է ներկայացնել Պատվիրատուին Ծառայությունների վերաբերյալ **ընթացիկ և ավարտական հաշվետվություններ**, որոնք հանդիսանում են Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունները հիմնավորող փաստաթղթեր:<br>• **Ընթացիկ հաշվետվությունները** ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտի ժամանակահատվածին համապատասխան, կատարողական ակտը ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո երկօրյա ժամկետում՝ ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունների հետ մեկտեղ, ընդգրկելով իրականացված ծառայությունները և կատարված աշխատանքները հավաստող ու հիմնավորող տեխնիկական փաստաթղթերի պատճենները (համառոտ նկարագրություն տվյալ ժամանակահատվածում իրականացված շինարարական աշխատանքների և տեխ.հսկողության ծառայությունների վերաբերյալ, տեղեկանք (Ձև 2), լաբորատոր փորձարկումների արդյունքներ, նյութերի, կոնստրուկցիաների որակի համապատասխանության հավաստագրեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների ընդունման ակտեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով), սխեմաներ, թույլտվություններ, և այլ անհրաժեշտ փաստաթղթեր):<br>**Ավարտական հաշվետվությունը** ներկայացվում է շինարարական աշխատանքների ավարտական կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո երկօրյա ժամկետում, որը պետք է ընդգրկի հետևյալ փաստաթղթերի պատճենները՝ ավարտական կատարողական գծագրեր, ավարտական կատարողական ակտ, ամփոփ նկարագրական տեղեկանք իրականացված շինարարական աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի համար, ավարտված շինարարական օբյեկտի լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով) |

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Հասցե՝ ք. Եղեգնաձոր Շահումյան-1<br>ՀՎՀՀ՝ 08917624<br>Հ/Հ՝ 900352101043<br>ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն<br>Համայնքապետ Դ.Հարությունյան<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | ՍՏՈՊՇԻՆ ՍՊԸ<br>Հասցե Վայոց Ձոր գ.Արին5-րդ փ./տ2<br>ՀՎՀՀ08917598<br>Հ/Հ՝2475805267280000<br>Բանկ ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ<br>/ստորագրություն Կ.Տ/ |

Հավելված 2
«ՎՁՄ-ԵՀ-ԳՀԾՁԲ-23/ՎՁՏՀ» ծածկագրով գնման պայմանագրի
« 26 » հունիսի 2023 թ. կնքված
Թիվ 1 Համաձայնագրով

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ...լերով ...ատե ...ած ...աբաժ ...ի ...արը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023 թ-ին` ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| | 71521100 | Եղեգնաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների մատուցում | | | | | | | | | | | | 301.050 | 301.050 |

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Հասցե` ք. Եղեգնաձոր Շահումյան-1<br>ՀՎՀՀ` 08917624<br>Հ/Հ 900352101043<br>ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն<br>Համայնքապետ Դ.Հարությունյան<br>------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | ՍՏՈՊՇԻՆ ՍՊԸ<br>Հասցե Վայոց Ձոր գ.Արին5-րդ փ./տ2<br>ՀՎՀՀ08917598<br>Հ/Հ 2475805267280000<br>Բանկ ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ<br>------------------------<br>/ստորագրություն Կ.Տ. |